



ՀԱՆՐԱՍ ԿԻՍԵՍՄԱՆՈՅ

ՎԻՊԱՍՄԱՆԱՆ, ԱՐՈՒՆՍՏԻՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԱՆՑ, ԵՐԵՎԱՆԻ ԵՒ ՉՈՒՍՔԱՆԻՍՑ:

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

Ա. ՏԱՐԻ.

1862 ՓԵՏՐՈՒՄ 15

ԹԻԻ 4

ԼԺՍԿԻՑ ՄԸ ԲՆՏՐԵԼ

“Երբոր ես ամուսնանամ, ըսաւ Տիգրան իր բարեկամին, որուն հետ օր մը կը խօսակցէր, պէտք է որ անոնելու կինս գեղեցիկ ըլլայ, որ ուրիշը չտեսնի, աղէկ ուսեալ ըլլայ, որ ընկերութեան մէջ չամչնամ, բարի բնաւորութիւն ունենայ, որ միշտ հետը չկուտիմ, նաեւ մատղաշ՝ որ շուտով չի թորմի:

— Ես ալ կ'ուզեմ, ըսաւ իւր բարեկամը, որ ամուսնանալու կինս հարուստ ըլլայ, որ երջանիկ կեանք մը վարեմ”:

Ժամանակէ մը ետքը՝ Տիգրան և իր բարեկամը Յովսէփ կինստեղծի ընկերու կ'ելեն. երկուքնին ալ գեղեցիկ երիտասարդներ ըլլալով, յարմարութիւն ունէին լաւ ընտրութիւն ընելու:

Տիգրան կ'սկսի իրեն արժանի ընկերը փնտռելու, ամիսներ կ'անցնին՝ իր ճանչցած օրիորդներէն չկրնար ընտրել մէկը, որ բաւական գեղեցիկ, ուսեալ, բարի բնաւորութեան տէր և միանգամայն

մատղաշ ըլլայ, բայց ինքը խիստ համբերող ըլլալուն չյուսահատիր:

Վերջապէս այնպիսի օրիորդի մը կը պատահի, որոյ գեղեցկութիւնը կատարեալ էր: Չան տեսնող անկարելի էր որ անոր սիրոյն չզարնուէր: Բայց Տիգրանին փմացական կարողութիւնը դորաւոր ըլլալուն՝ դիւրաւ չյաղթուեցաւ այս սիրոյ աստուածուհիին, միտքը բերաւ թէ քի քի փափաքած յատկութիւններէն միայն գեղեցկութիւնը ունէր ան, անոր համար ետ կեցաւ անիկէ, և սկսաւ միւս յատկութիւններովը մէկտեղ ունեցող մը փնտռել:

Ուրիշ մէկ աղնուական ընտանիքի մը հետ բարեկամութիւն հաստատելով, շուտով անոր աղջկանը հետ սերտ կապակցութիւն ունեցաւ, ամեն բան յաջողութեամբ յառաջ կերթար: Ես աղնուհին ամեն տեսակ կատարելութիւնները ունէր:

Թէ և երևոյթը մատղաշ էր, սակայն օրիորդը միշտ ծածուկ կը պահէին իրենց տարիքը, և ինքը չկրցաւ ճիշտ անոր տարիքը ճանչնալ, ոչ ալ անոր

բնաւորութեանը մէջ պակասութիւն մը գտնել:

Առտու մը անոր այցելութիւն ընելով, որ ան իրիկուն զան թատրոն հրաւիրէ, յանկարծ ներս մտած ատենը՝ անսաւ որ իր պղտի քրոջը ականջէն կը քաշէր, իր Գաղղիարէն դասը չսորվելուն համար, թէպէտ և աս անլայել դործ մի էր, սակայն աննեւրեւի յանցանք մը չէր: Տիգրան անոր աս ընթացքին վրայ վշտանալով, մէյ մ'ալ այցելութեան չը գնայ:

Բայց իր բարկութեան մէջ իր հետաքրքրութիւնը միւս օրիորդին վրայ շարժեցաւ, որ արուսեակի պէս գեղեցիկ աղնիւ անձ մի կ'երեւէր, և ուրուն մութ կաղնադոյն աչքին նայուածքին տակը զմայլեցուցիչ անուշութիւն մը կը պահուէր, և իր ձայնին եղանակը ամենաքաղցր նուաղարանի ձայնին կը համեմատէր: Ճշմարիտը խօսելով տղնութիւնը և համեստութիւնը անոր վրայ կը փայլէին:

Տիգրանին միտքը յափշտակուեցաւ աղջկան եւ ընդթէն, սակայն իր յափշտակութեան հետ ան պաղ խորհուրդն ալ խառնուած էր, որ չըլլայ թէ առջինին պէս պակասութիւն ունենայ: Ուստի որոշեց որ եթէ այս օրիորդը ուտեալ է՝ անոր հետ ամուսնանայ:

Սակայն դժբախտաբար կրթեալ չէր ան, քանզի իրական դաստիարակութեան տեղը՝ սիրալրական կրթութիւնը ունէր:

Տիգրան անոր այսչափ դաստիարակութենէն դո՛հ չըլլալով՝ անոր հետ ալ չամուսնացաւ, և կորանցուց անդին գտնձ մը:

Բաւական ժամանակ անցնելէն ետքը, կ'ելլէ չորրորդ փորձ մի ալ ընելու, և անանկ կին մը առնելու, որ գեղեցկութիւն, կրթութիւն, բարի բընաւորութիւն և քաղաքական անուշութիւն ունենայ: Այս անգամ մէկը գտաւ, որ իր ուղած յատկութիւններէն երեքը ունէր, սակայն գեղեցիկ չէր. ուստի չուղեց ամուսնանալու. ուրիշ մը գտաւ, մատղաշ չէր, ան ալ թողուց. քանզի միտքը դըրած էր որ չափով կրնայ սիրել զան որ եթէ մատղաշ և գեղեցիկ չըլլայ:

Վերջապէս Տիգրանին բախտէն՝ այնչափ քննելէն, յոգնելէն և յուսահատելէն ետքը, այնպիսի տիրուհի մը պատահեցաւ որ թէ մատղաշ, կրթեալ, գեղեցիկ, և թէ բարի բնաւորութեան ալ տէր անձ մի էր: Ի՞նչ ուրախութեան օր էր ան մեր ձանձրալի բարեկամին: Իր համբերութեանը և եռանդին ի՞նչ խնդութիւն. ուրախութեան պիտի մոլեղնէր իր փափաքածը ստանալուն համար. ժամանակ չանցունելով իր դիտաւորութիւնը կ'առաջարկէ, բայց ի՞նչ դժբաղդու-

թիւն... կը մերժուի:

Իր յոյսերը և համբերութիւնները ասանկ վախճանի մը հասնելէքը չէր սպասէր. իր հպարտութեանը վրայ ահարկու հարուած մի բերաւ: Բայց աս ալ մտածեց որ միայն ինքը ազատ չէր նորութիւն ընելու, և պէտք էր զինքն ալ ընտրելին: Աս խորհրդածութիւններէն ետքը որոշեց որ չամուսնանայ, եթէ ոչ՝ պէտք էր. մէկ պակասութեան ներողամիտ ըլլալ, որ կարենայ ուղածը դտնել, այսինքն ընտրելու անձը եթէ կրթութեան չէ, գոնէ գեղեցկութիւն, բարի բնաւորութիւն և մատղաշութիւն ունենայ. ուստի մէկ աղջիկէն միւս աղջիկին յատկութիւնները փորձելու ելլելով, տարիներ անցան, դէմքը սկսաւ տղեղնալ, իր այսչափ յուսահատական փորձերէն ետքը բնութիւնն ալ անկանոն ըլլալով, իր առջի փորձածները սկսան վրան ծիծաղել, և ինքը չկրցաւ մէկը դտնել, ուրուն հետ ամուսնանայ:

Վերջապէս յուսահատելով որոշեց որ գոնէ միայն գեղեցկութիւն և բարի բնաւորութիւն ունեցող մէկը գտնէ. բայց գեղեցկութիւնը շատ ըլլամայլոյնք ունենալով, որով որ առաջարկեց՝ յոյսը պարապը ելաւ:

Տիգրան ուղեց որ ուրիշ փորձ մ'ալ ընէ, ինքնիրեն ըսելով թէ՝ «Գեղեցկութիւնը անցաւ, որ է և բարի բնաւորութիւնը ոչինչ. միայն դո՛հ եմ թէ որ մատղաշ մէկը առնեմ. որչափ զուարճալի է մատղաշ մտքի մը յառաջագիմութեանը հսկել, և օրէ օր զան կրթելով, իմ բնութեանս նմանցնել կարող պիտի ըլլամ. ուստի անշուշտ պէտք է որ կինս մատղաշ ըլլայ»:

Բայց աւա՛ղ մեր յոյսերուն ունայնութեանցը, Տիգրան մոռցած էր թէ ալ հիմա ինքը ծեր է, և թէ ամէնուն բարեբաղդութիւնը չէ մատղաշ կընող պատահիլ, և անոր սիրելի ըլլալ: Այս անգամ ալ մերժուելով, ինքզինքը յուսահատութեան տուաւ, և իր օրերուն մնացորդը ծեր ամուրիի պէս կ'անցունէր:

Իսկ Զովսէփ նոյն ժամանակ հարուստ աղջիկ մը դտնելու ետեւէ էր, ծածկելով իր դիտաւորութիւնը թէ շահուն համար ելեր է ամուսնանալու: Երկար ժամանակ խուզարկութիւններ ընելով, վերջապէս հարուստ աղջկան մը սիրտը իրեն գրաւեց և ամուսնացաւ անոր հետ:

Ճշմարիտը խօսելով, սկզբունքի տէր մարդ մ'էր. որչափ որ հարստութեան համար ամուսնացեր էր իր կնոջը հետ, բայց կը սիրէր զայն, և արժան եղած պատիւը կուտար անոր: Բայց իր կե-

կարծիքով մը՝ երեք հազար տուբաթի համախումբ գումարը ճիշդ հիմա չեմ կրնար կոր լման գումար մը ձեռքսէլ։ Ի՞նչ կ'ըլլայ եղբր, Թուսպալ՝ իմ ցեղիս հարուստ Հրէայներէն մէկը, օգնութիւն մը կրնայ մատակարարել ինձ։ Բայց կեցիք նայինք, քանի՞ ամսուան կ'ուղէիք։ — Գուք անհոգ եղիք, աղնիւ պարոն։

ԼՆԹՈՒԽՈ

Մենք ալ հիմա ձեր ազնուութեան խօսքը կ'ընէինք։

ԼՆԹՈՒԽՈ. Եւթը, թէ և ոչ չափէն էլէլ տալով, և ոչ չափէն էլէլ առնելով, ոչ փոխ կուտամ և ոչ փոխ կ'առնեմ, սակայն իմ բարեկամիս հարկն ստիպած կարօտութիւնը ծածկելու համար՝ իմ կանոնս պիտ'աւրեմ։ — ձեռքերնիս է, որչափ ստակ կ'ուղէիք։

Եւթը. Հէ՛, Հէ՛յ. երեք հազար տուբաթ։

ԼՆԹՈՒԽՈ. Ու երեք ամսուան։

Եւթը. Ես մօտցեր էի, երեք ամիսը — Իբրեւ գուք ինծի անանկ ըսիք. ուրեմն, շատ աղէկ, մուրհակնիդ տեսնեմ։ — Բայց ինձ նայեցէք, ինծի այնպէս երեւցաւ, որ ըսիք թէ շահով ստակ փոխ չէք առնէր ու չէք տար։

ԼՆԹՈՒԽՈ. Ինչու սովորութիւն ըրած չեմ։

Եւթը. Երբոր Յակոբ, իր Լաբան մօրեղբոր խաչիները կ'արածեր, այս Յակոբը՝ (ինչպէս որ իր խոհեմ մօրը (1) բարի խրատներովն ալ) մեր սուրբ Եբրահիմին երրորդ ժառանգն էր. Հէ՛, Հէ՛յ, երրորդն էր։

ԼՆԹՈՒԽՈ. Ի՞նչու ինչ. շահ առաւ։

Եւթը. Չէ, շահ չառաւ, ձեր ըսածին պէս՝ ուղղակի շահ չառաւ. այլ նայեցէք Յակոբ ինչ ըրաւ։ Երբոր Լաբան և ինք դաշինք ըրին որ հօտին մէջ որքան խառուտիկ ու զծաւոր ոչխար ըլլան նէ, Յակոբ՝ զանոնք իբրեւ վարձք առնէ. ոչխարները հասակի գալով՝ աշնան վերջը խոյերուն մօտ դացած առնէ, երբոր այս ասուէքեր սեռին սերունդն առաջ երթալու վրայ էր, խեղցի հովիւնիս՝ քանի մը գաւազաններ յստիեց ինձ, ու բնութեան գործը տեսնելու առնանին, բոնեց պիղծ ոչխարներուն առջև տնիեց զանոնք, որոնց յղանալու միջոցին ըլլալով՝ երբոր ծնան, պաւտ պաւտ նշաններով գառեր բերին, և ահա ասոնք Յակոբինն էին։ Ես՝ շահելու եղանակ մըն էր, ու օրհնութիւն առաւ, շահն ալ՝ օրհնութիւն մ'է, թէ որ մարդիկ զան գողութեամբ չի վատակին։

(1) Ուրեկա։

ԼՆԹՈՒԽՈ. Ես մէկ բաղդ մըն էր, աղաս, որու համար Յակոբ ծառայութիւն ըրաւ. ատոր առաջ՝ դալը՝ իր ձեռքն ըլլալու կարող բան չէր, այլ, Լստուծոյ առաջնորդութեամբ և անոր հրամանաւ եղած բան մ'էր։ Ես իրենց կը սորվեցնէր որ աղէկ շահ ընեն. կամ, ձեր ոսկին ու արծաթը խոյ են ու ոչխար են։

Եւթը. Չեմ դիտեր, արագօրէն կը շատցնեմ կոր. — Բայց ինձ նայեցէք, պարոն։

ԼՆԹՈՒԽՈ. Ես աղէկ դիտեցէք, Պասանիօ, որ սատանան իր դիտաւորութեան համար՝ Լստուծաւ ծաշունչէն վկայութիւն կը բերէ։ Շար հողին՝ որ սուտ վկայութիւն կը բերէ, ժպտող երես ունեցող շար մարդու կը նմանի. կամ սիրտը փտած աղոր խնձորի։ ո՛հ, խաբեբայութիւնը ինչ սիրուն տեսնուածք ունի։

Եւթը. Երեք հազար տուբաթ, — պիտ'աղւոր մեծ գումար մ'է։ Երեք ամսուան տասն՝ երկուքէ, հիմայ շահը նայինք ինչ կ'ընէ։

ԼՆԹՈՒԽՈ. Ի՛, Եւթը, բաներնիս գործերնիս թողունք քեզ նայինք։

Եւթը. Պարոն ԼՆԹՈՒԽՈ, շատ անգամ և յաճախ, իմ փոխանակադրոցս և տոկոսեացս յարգը կարեցիք Ռիալթօն, ես ձան չի հանելով ուսերս վեր-վերցուցի, ինչու որ նեղութիւն քաշելու մեր ցեղին մեղքն է։ Գուք ինծի անհաւատ՝ ու կատաղած շուն կը կանչէք, և իմ Հրէական վերարկուիս և բոլոր ինծի վերաբերեալ բաներուն վրան կը թքնէք։ Ուրեմն բարի, հիմայ կ'երեւի, որ իմ օղնութեանս էք կարօտացեր. եկէք նայիմ հիմայ քովս, գուք ինծի կու գաք, ու ինչ կ'ըսէք, Եւթը, «բախի հարկա-որո-թիւն ունիս», ասանկ չէք ըսեր, գուք՝ որ խլինքնիդ մօրուքիս վրան կը նետէք, և ոտքովիդ զարնելով իս ձեր դռներուն չեմն գուրս կը վառաւէք, որպէս թէ պոռնկածին օտարական շան-լակոտի մը կից տայիք, հիմայ՝ մաքերնիդ ստակ ուղել է, անանկ չէ՞. ես ալ ձեզի ինչ ըսել պէտք եմ. ըսել պէտք չեմ, որ Եւթը պապի կ'ունենայ, պապիորդի շուն մը երեք հազար պապի կրնայ փոխաւ. կամ աւելի անդին խօսամ, և սարուկի պէս խոնարհեմ, ու յարգական խոնարհութիւններ վարտալով ըսեմ այսպէս, — Միեւեւ Լա, անցեալ Չրեւելի օր վրաս լուսնիս. որիւ օր ծալին ինչ պո-րէ, որիւ անգամ ծալ իս շուն կանչեցի, ու այս շնորհալու համար՝ ահա՛ այսան պապի փոխ կ'առամ։

ԼՆԹՈՒԽՈ. Ես քեզ դարձեալ այդպէս պիտի կանչեմ, դարձեալ վրադ պիտի թքնեմ, ու քեզ նոյնպէս կից պիտի տամ։ Թէ որ այդ ստակը

կէտը լոյսի դործածութիւնն է . պէտք է որ ունենաս ապակիով ծածկուած սենեակ մի հիւսիսային դիրքով . խոյց նոր սկսողը առաւել աղէկ է որ բաց օդին մէջ ընէ իր փորձը : Նստողին երեսը աղէկ լուսաւորուած պէտք է որ ըլլայ , բայց արեւին ճառագայթներէն շուք եղած : Վառարանին ուղղելէդ ետքը՝ ապակի շրջանակը հանէ և անոր տեղը մուծ շրջանակը դիր . ոսպնածէ ապակիին ծածկոյցը դոյցէ , և դուրս քաշէ մուծ շրջանակիդ ծածկոյցը . և նստողին մէկ առարկայ մը ցըցուր որ միշտ հոն նայի և անշարժ կենայ . ան առեւն ոսպնածէ ապակիին ծածկոյցը բաց , մտքովդ 10 կամ 20 համրէ , ու դարձեալ դոյցէ ոսպնածէ ապակիին ու վար իջեցուր մուծ շրջանակին տախտակ ծածկոյցը :

Անկարելի է որ ընդհանուր կանոն մը դըրուի որչափ ժամանակ նստեցունելուն վրայ : Պայծառ տաք օր մը , բաց օդին մէջ մարդու պատկեր առնելու համար 1 մանրերորդէն մինչև 3 մանրերորդ բաւական է , քանի որ մէկ ու կէս բոյէ բաւական չէ մուծ օդի մէջ առած առեւնդ : Ասիկայ միայն փորձը կրնայ ստուգել . և չկարծուի ալ որ արեւ չեղած օրը՝ անյարմար է ֆօթօկրաֆի դործողութեան , այլ ընդհակառակը՝ պայծառ օր մը՝ թէպէտ ամպոտ սքանչելի պատկեր կ'առնուի :

Ե . ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Պատկերը արապայպելուն վրայ :

Հիմա կը դառնամք մուծ սենեակը , և դուռը կը դոյցենք և մուծ շրջանակէն ապակին հանելով կը նայինք որ փոփոխութիւն մը եղած չէ : Գօլօֆօնի դործողութեամբ երկու տեսակ պատկեր կ'առնուի , որ մէկը դրական և միւսը ժխտական կը կոչուի . դրական պատկեր մը եթէ սե բանի մը վրայ բռնես՝ կատարեալ պատկեր կ'երևնայ , լոյսերը շուքերը ճիշդ իրենց դիրքը պահած , բայց ժըխտականը ընդհակառակն շփոթ կ'երևայ . որմէ քանի հատ որ ուզես թուղթի վրայ կրնաս փոխադրել :

Որ և իցէ դրական պատկեր առնելու համար՝ 54 տրամ պարզ ջուրի մէջ , 1 տրամ proto-sulphate de fer հալեցուր , և 1 տրամ nitrate de potasse cristallisée . յաւելցուր վրան 2 ու կէս տրամ acide acetique glaciale :

Աս բաղադրութիւնը պատրաստ ունենալով , որմէ պատկերին վրայ բաւական թափէ , որ ծածկուի պատկերը աջ ձեռքիդ մէկ անկիւնէն սկսելով : Պէտք է մեծ հոգ տանիս թափելու ժամանակդ . քանզի պատկերը երևան հանող լուծմունքը ապա-

կիին վրայ մէկէն ծածկելու է , եթէ ոչ՝ աղտեր կ'երևնայ : Աս լուծմունքը թափելովդ՝ առաջ բաց լոյսերը կ'երևնայ , ետքէն կէս դոյները , և վերջապէս շուքերը : Աս փոփոխութեան ժամանակ վրայի թափած հեղուկը միշտ շարժման մէջ պիտի պահես , կամ վրան փշելով կամ կամաց մը ծռելով . կտոր մը ճերմակ թուղթ դիր տակը , որ դործողութիւնը առաւել յստակ տեսնես , և առաւել աղէկ է շատ չսպասես յայտնուելուն , քանզի պատկերը աղտոտ կ'երևնայ :

Զ . ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Պատկերը հասարակելուն վրայ :

Երևան հանող լուծմունքը պատկերին վրայէն թափելով , պէտք է որ աղէկ մը լուանաս պղտի աղբիւրի վազուն ջրի տակ բռնելով : Լուանալէդ ետքը առանց վտանգի կրնաս լոյսին ցոյցընել : 45 տրամ պարզ ջրի մէջ 2 տրամ cyanide de potasse լուծէ , աս լուծմունքին մէջէն 2-3 անգամ պատկերը անցուր , որ բոլոր մակարձի նըման երևոյթները պիտի աներևոյթանան . աս դործողութիւնը շատ անգամ կրկնելու չէ , քանզի պատկերը բոլորովին կ'աներևոյթանայ :

Յետոյ աղէկ մը լուանալու է , հոգ տանելով որ ապակիին վրայի մաշկը չկոտրուի : Ապակին լուանալէդ ետքը փոշի չեղած տեղ մը դիր որ չորնայ . և թէ որ շուտով չորցնել կ'ուզես՝ կրակով չորցուր . այսու ամենայնիւ միտքդ ըլլայ որ տակաւին վրայի մաշկը վնասուելու ենթակայ է . անոր համար պէտք է որ զինեղուոյ վէրիճով մաշկը ծածկես , ինչպէս որ քօլօֆօն թափեցիր , անանկ ալ վէրիճը թափելու է . տաքցուր պատկերը վէրիճը դնելէդ առաջ և ետքը :

Ասիկայ միայն պարզ դործողութիւնն է , և հետզհետէ պիտի բացատրեմք ամէն մէկ նիւթոյն շինելուն կերպը հրատարակելով , և ամեն մէկ դործողութեան վրայօք ընդարձակ տեղեկութիւններ տալով , և մանաւանդ դժուարութիւնները և ձախորդութիւնները ինչէն յառաջ գալը պիտի իմացունեմք մեր ընթերցողաց :

Նախընթաց թուերնու 237 երեսին 27 էջին 197 տողին չիւն ծծմբոյ ելէր աւելցելու է ին տեղը կարգաւ և լէոր քօլօֆօն թափեցա՝ չիւն ծծմբոյ ելէր աւելցելու է :

ԴԻԻՐԵՍԸ ՍՍԻՆՁ (ԼԻԼԻԱ) ՇԻՆԻ

Հարիւր տրամ աղէկ սոսինձը քիչ մը ջրով

Հետ ոտակի առաքինութիւնն ալ կցելու ըլլամք՝ որչափ մեծ և տեղական կ'ըլլայ մեր ըրած բարե-
բարութիւնը. սակայն քիչերը կան որ աս մարդասի-
րական յատկութիւնը ստացած են. քանզի խղճա-
շեաց համար ժամ մը դործածելիք ոսկի մը տալէ
առաւել կ'արժէ :

ՊԼՏՆԵՐԸՆՍԻ ՍՈՍԿՈՒՄՐ

Երեւելի պատմիչն մէկը հաշուած է թէ աշխար-
հիս ստեղծութենէն հետէ տասն և չորս հազար միլի-
օն անձինք սպաննուած են պատերազմի մէջ. եթէ
աս Ֆարքս ահաւել թիւը ձեռք ձեռքի բռնէին՝
14,583,880 մղոն տեղ պիտի բռնէին և մեր բնա-
կած երկրին բոլորաբը 608 անգամ պիտի շրջա-
պատէին. և թէ որ մէկը մէկու վրայ 30 ական օխայ
հաշուելու ըլլանք 1,246,500,000 խանթար պատա-
ռած տձև վերնաւորած կոսկրտած անձինք ոտքեր-
նուս տակը պիտի ըլլային. աս հաշիւը առաւել
հիանալի պիտի երևնայ. երբոր ըսեմ թէ աս
14,000 միլիօն անձանց ցուցամատը մէկ մէկու կըս-
ցըվեր՝ շիտակ գիծով մը 600,000 մղոն լուսինէն
անդին պիտի անցնէր, և թէ որ մարդ մը ուզէ աս
թիւը հաշուել օրը 19 ժամ, և շաբաթը 7 օր
և 6000 թիւը ժամու մը մէջ, ան մարդը 336 տա-
րի պէտք է աշխատի. և առաւել ահաւելին ան է որ,
3,500,000 մասուրա մարդկային արիւն թափուած
է սրտերազմի մէջ:

ՀԱՄԵԿՐՈՒԹԻՒՆ

Պարսիկ բանաստեղծին մէկը կ'ըսէ որ Ադամի
որդիները մէկըմէկու անդամ են. քանզի մէկ շն-
չով ստեղծուեցան: Թէոր անդամներէն մէկը ցաւ
մը կրէ, միւս անդամները պէտքը չէ որ անհոգ
ըլլան. և թէոր դուն ուրիշներուն նեղութեանը
ցաւակից չ'ես ըլլար, պէտքը չէ որ քեզի մարդ
կոչեն:

ՍՏԸԿ ՎԼԱՏԿԵՆՈՒ ՆՈՐ ԽԵՄԵԼՅ ՄՐ

Պարոն Ստեփան, ուր դատար ատ նոր լաթե-
րը: Մէկալ օր հարուստ տղայ մը այնչափ բար-
կացուցի, որ երեսին եռամբու մը զարկաւ. ես ալ
զինքը խօսնախ քաշեցի. տալա ըրի, իրաւունքս
պահանջեցի, դատարորը տղուն երկու լիբայ տալ
տուաւ ինծի: Աս ճամբան բռնեցի հիմայ. կար-
ծեմ քիչ ժամանակէն հարուստ մէկը պիտի ըլլամ:

Բարեկամիս մէկը ձուկի օլթայով կէս ժամու
մէջ վեց մուկ բռնեց է. ով կ'ըսէ թէ աս երկրին
մէջ դիւա չ'կայ:

Ծ Ն Ո Ւ Ն Դ Ք

Փետր. 2.	Տիկին	Պօղոս Միկեղոսեան, արու.
" 7.	"	Բախրիշ Զովակիսեան, "
" 7.	"	Մ. Ղազարոս Ղազարեթեան "
" 7.	"	Տիարպէրիցի Զօհանէսեան "
" 15.	"	Ստեփան Արիկեան "

Ը Մ Ո Ւ Ս Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Փետր. 4.	Ի տուն Զօհանէի շէշպի Կոստ. ֆեան, ձեռ. մը տէր Զարոյ թիւն քահանայի, օրիորդ Երանիկ Դօրասանեան ընդ Թաղուոր Յ. Չանաք-բալիկեան.
Փետր. 4.	Ի սուրբ Ստեփանոս, ձեռ. մը տէր Փիլիպպոս քահանայի, օրիորդ Չանիկ Մէյմար Կիրակոսեան ընդ Պրուսայի Տէվելշ օղու Աղաբիկ:
Փետր. 4.	Ի սուրբ Ստեփանոս, ձեռ. մը տէր Առաքէլ քա- հանայի, օրիորդ Մարիամ Ս. Զաֆանեան ընդ քիւրծի Մը- կրտիշ Գէորգեան:
Փետր. 4.	Ի սուրբ Ստեփանոս, ձեռ. մը տէր Փիլիպպոս քա- հանայի, օրիորդ Հռիփս մէ Թաղարձեան ընդ Կարապետ Չու- ձի Ստեփանեան:
Փետր. 11.	Ի տուն Գ. Ճշմարտաստեանի, ձեռ. մը տէր Զօհանէս քահանայի, օրիորդ Վասիլքօ Էօտէմիլցի Սէրձեան ընդ Գաբրիէլ Ճշմարտաստեան:
Փետր. 11.	Ի սուրբ Ստեփանոս, ձեռ. մը տէր Առաքէլ քա- հանայի, օրիորդ Թաղուոր Թաղարձեան ընդ Բօրասեան Զով.
Փետր. 11.	Ի սուրբ Ստեփանոս ձեռ. մը տէր Զակար քա- հանայի, օրիորդ Սուլմէն Անտօնեան ընդ Պօլեցի Զովհան.
Փետր. 11.	Ի սուրբ Ստեփանոս, ձեռ. մը տէր Գէորգ քահա- նայի, օրիորդ Տիգրանեանի ստիլիշ Պետրոսեան ընդ Ստեփան պարտիկոյան Պարուստուկեան:
Փետր. 11.	Ի սուրբ Ստեփանոս, ձեռ. մը տէր Առաքէլ քա- հանայի, օրիորդ Սրբուհի Սարգիսեան ընդ Մ. Խաչատուր աշ- վազ Զաֆանեան:
Փետր. 12.	Ի տուն Զակար Սիմեոնի, ձեռ. մը տէր Զաֆանէս քահանայի, տիկին Տաւուս Ֆինճանեան ընդ Գը- րիգօր Էլմասեան:

Մ Ը Է Ք

Փետր. 5.	Գէօթահալը Եղիա.
" 6.	Նիֆցի Պետրոսեան պէրպէր Զովհանէս.
" 7.	Կարապետ Տիպրեան.
" 7.	Տիկին Մանեա Կարապետ Սուքիսեան.
" 13.	Հեղինէ կազմարար Նիկոլոսեան.

Տ Ն Օ Ր Ե Ն Ե Ի Ի Մ Բ Ը Գ Ի Ր ՍԵՐԳԻՍ ՓԵՓԵՆՆԵՆ

Զ Մ Ի Ի Ռ Ն Ի Ը Ի ՏՈՒՐԱՆԻ ՏԷՏԷՆՆԵՆ